ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի՝ 2023**թ. մայիսի** 24-**ից** 27-**ը**

Մոնտենեգրո գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը***

Վահե Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարար

2. ***Գործուղման վայրը և ժամկետները՝***

Ք. Տիվատ, Մոնտենեգրո, 2023 թվականի մայիսի 24-ից 27-ը

3. ***Հրավիրող կողմը՝***

Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) և Համաշխարհային բանկ (ՀԲ)

4. ***Գործուղման նպատակը՝***

Մասնակցություն ԱՄՀ/ՀԲ՝ Հայաստանն ընդգրկող Ընկերակցային խմբի հանդիպմանը՝ որպես ՀԲ կառավարիչների խորհրդում Հայաստանի Հանրապետության կառավարիչ:

5. ***Քննարկված թեմաները՝***

Ընկերակցային խմբի հանդիպման ընթացքում անդամ երկրների հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ինստիտուտների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից քննարկվել են Ընկերակցային խմբի անդամ պետությունների համար առաջնային հարցեր, ներառյալ ԱՄՀ-ի և ՀԲ-ի քաղաքականությունների առաջնահերթություններն ու ծրագրերը, ինչպես նաև եվրոպական և համաշխարհային տնտեսության մարտահրավերները, այդ թվում՝ «COVID-19» համավարակի և որոշ տարածաշրջաններում ռազմական կոնֆլիկտների

արդյունքում առաջացած ճգնաժամերից հետո կայուն զարգացման հնարավորությունների վերականգնմանն ուղղված ջանքերը:

Այդ համատեքստում առաջնային է համարվել գնաճային ճնշումների, ֆինանսական լարվածության և համընդհանուր անորոշությունների պայմաններում մակրոտնտեսական կայունության ամրապնդումը: Քննարկվել է, թե ինչպես պետք է մակրոտնտեսական, ֆինանսական ու կառուցվածքային քաղաքականությունները համատեղ իրականացվեն՝ հաղթահարելու կայուն գնաճը՝ միաժամանակ խուսափելով ֆինանսական ճգնաժամից և անկումից:

Մանրամասն քննարկումներ են ծավալվել նաև արդի մեկ այլ խնդրի՝ միգրացիայի ու դրա արդյունավետ կառավարման շուրջ: Ներկայացվել է այդ մասին ՀԲ Համաշխարհային զարգացման 2023թ. զեկույցը՝ «Միգրանտներ, փախստականներ և հասարակություններ» խորագրով, որն առաջարկում է և՛ նպատակակետ, և՛ ծագման երկրների, ինչպես նաև հենց միգրանտների և փախստականների զարգացման վրա անդրսահմանային տեղաշարժերի ազդեցություններն առավելագույնի հասցնելու ինտեգրված շրջանակ:

Միաժամանակ, կայացել են պանելային քննարկումներ, որոնց ընթացքում Ընկերակցային խմբի անդամ երկրների բարձրաստիճան ներկայացուցիչները ներկայացրել են վերը նշված ոլորտներում իրենց երկրներում վարվող քաղաքականություններն ու մտքեր փոխանակել տարածաշրջանում կայուն զարգացմանն ուղղված առաջնահերթությունների շուրջ:

*6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝***

Ընկերակցային հանդիպման շրջանակներում առանձին հանդիպում է կազմակերպվել Համաշխարհային բանկի՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով փոխնախագահ Անտոնելլա Բասսանիի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ)՝ Եվրոպայի, Լատինական Ամերիկայի և Կարիբյան երկրների հարցերով փոխնախագահ Ալֆոնսո Գարսիա Մորայի հետ: Հանդիպմանը ներկա է

եղել նաև ՀԲ տնօրենների խորհրդում Հայաստանը ներկայացնող տնօրեն Կուն Դավիդսեն: Քննարկվել են ընթացիկ համագործակցությանն առնչվող հարցեր, անդրադարձ է կատարվել նաև էներգետիկ ոլորտում համագործակցությանը, ընթացիկ որոշ ծրագրային հարցերի: Միաժամանակ մտքեր են փոխանակվել նոր, ներառյալ՝ կանաչ ֆինանսավորման, կանաչ պարտատոմսերի, կանաչ տաքսոնոմիայի ուղղություններով համագործակցության ընդլայնման հնարավորությունների շուրջ, ներկայացվել են ՄՖԿ աջակցության գործիքներն ու փորձը այդ բնագավառներում:

Մեկ այլ երկկողմ համատեղ հանդիպում կայացել է Վրաստանի ֆինանսների նախարարության և Ազգային բանկի գործընկերների հետ: Հաշվի առնելով երկու երկրների նշյալ կառույցների միջև արդյունավետ փոխգործակցության արդի մակարդակը՝ հանդիպման ընթացքում փոխհամաձայնեցվել են երկկողմ համագործակցության խորացման, փորձի փոխանակման ուղղությամբ միասնական քայլերը, այդ թվում՝ համատեղ համաժողովների և խորհրդակցությունների կազմակերպման միջոցով:

7. ***Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝***

1. Ընկերակցային խմբի հանդիպման ավարտին հայտարարվել է Մոլդովայի Հանրապետության՝ ԱՄՀ/ՀԲ Ընկերակցային խմբի 2024թ. հանդիպումը հյուրընկալելու մասին:

2. Վրաստանի ֆինանսների նախարարության հետ երկկողմ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել վրացական կողմի Հայաստան պատվիրակության այցը կազմակերպել 2023թ. հունիսի 30-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում, որի շրջանակներում կկայանա 2-օրյա համաժողով՝ ֆինանսների նախարարությունների, ՀՀ կենտրոնական/Վրաստանի ազգային

բանկերի, երկու երկրների՝ հարկային և մաքսային վարչարարության համար իրավասու ներկայացուցիչների մասնակցությամբ:

Համաժողովի ընթացքում երկուստեք կներկայացվեն երկու երկրների մակրոտնտեսական քաղաքականությունը, իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև կքննարկվեն արդի տարածաշրջանային մարտահրավերներն ու դրանց հաղթահարման ուղիները, ներառյալ՝ հարկային և մաքսային քաղաքականությանն ու վարչարարությանն առնչվող հարցեր:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

5/31/2023

X

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN VAHE 2903800432

31.05.2023թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 507-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Վահե Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարար

4. Գործուղման վայրը՝ ք. Տիվատ (Մոնտենեգրո)

5. Գործուղման ժամկետները՝ 2023 թվականի մայիսի 24-ից մինչև մայիսի 27-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) **<u>պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը</u>**
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

<u>V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը</u>

<u>□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն</u>

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Ծախսի տեսակը		**Վահե Հովհաննիսյան**	**Ընդամենը (դրամ)**
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս,բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**294,268**	**294,268**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, EUR)	35	
	Վճարը 1 օրվա համար(դրամ)	14,916	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	**44,747**	**44,747**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, EUR)	24	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	10,112	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	**40,450**	**40,450**
Այլ ծախսեր	Հակահամաճարակայի ն նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (Սրահից օգտվելու	**5,000**	**5,000**
Ընդամենը ծախսեր (դրամ)		**384,465**	**384,465**

1EUR=421.35

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Կարեն Սարգսյան

31.05.2023թ.